

## ԳՐՔԵՐԻՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ. BOOK REVIEWS

---

Լույս է տեսել Մ. Սարգսյանի, Շ. Ասիլբեկյանի, Ս. Բաղրամյանի և Ն. Խաչիբաբյանի «Հայերենի ածանցների բառարան» (Ե., «Արմավ» հրատ., 2024, 104 էջ) համառոտ աշխատանքը՝ «Գալուստ Կիլպէնկեան» հիմնադրամի տրամադրած ֆինանսավորմամբ, ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ (խմբագիր՝ Բ. Գ. Դ. Հ. Հ. Մեսրոպյան): Հեղինակները իրենց այս սեղմ աշխատությունը նվիրել են լեզվի ինստիտուտի հիմնադրման 80-ամյակին, որ միանգամայն դրվատելի է: Միաժամանակ գրում են, որ «լեզվաբանները կարող են կիրառել բառարանը՝ բառերի ներքին կառուցվածքը ուսումնասիրելու, բառակազմական օրինաչափությունները դիտարկելու և լեզուների պատմական զարգացման մասին գաղափար կազմելու համար» (էջ 18):

Բառարանն ունի համեմատաբար ծավալուն, քան բուն բառահոդվածների ամբողջություն, առաջաբան (էջ 9-18), որում խոսվում է հայերենի ածանցների խմբավորման, բաղակազմության, բառարանի գործնական նպատակների մասին:

Բառարանը բավականին համառոտ է, ընդգրկված է (մեր հաշվումներով) նախաձանցներից՝ 31 (էջ 19-31), վերջաձանցներից՝ 194 (էջ 33-87), միջաձանցներից՝ ընդամենը 2 (էջ 89-90), և բայական ածանցներից՝ 41 (էջ 91-98) միավոր, որոնք բառարանային «մշակման» են առնված երկու տեսանկյունից՝ քերականական նշումներ, թե տվյալ ածանցով ինչ խոսքի մասի պատկանող բառեր են սերվում, և օրինակների թվարկումներ՝ օրինակում ընդգծելով այդ ածանցը:

Նկատի ունենալով աշխատանքի ծավալը, ինչպես նաև, այսպես կոչված, բառահոդվածների կառուցվածքը, այն կարելի է ավելի շուտ բառգրքույկ կոչել, մանավանդ որ այն ըստ էության հետապնդում է գործնական նպատակ:

Հայերենի բառապաշարի «համակարգում» կան ածանցմանը և ածանցների տեսական ուսումնասիրությանը և գործնական կողմին «բառարանագրմանը» վերաբերող աշխատություններ (հեղինակներն իրենք էլ առաջաբանում նշում են, թե ինչ «բառարաններ և բառացանկեր» են աչքի առաջ ունեցել՝ թվով 7), որ այդուհանդերձ փորձ են արել կազմելու սույն հանրամատչելի «բառգրքույկը»:

Հարկ չհամարելով խորանալ բառարանի «բովանդակային» կողմին՝ նկատենք, որ նման հանրամատչելի բառարանների (ուղեցույցների, բառացանկերի և այլն) նշանակությունը համարում ենք ոչ պակաս կարևոր հայերենի բառապաշարի կառուցվածքի ուսումնասիրմանը նվիրվող աշխատանքների համար:

Նման գործնական բառարանի ստեղծումը միշտ արժանի է դրվատանքի, քանի որ ներկայումս հայերենի առօրյա իմացությանը, մանավանդ ուղղագրության և ուղղախոսության, այլև բառապաշարի վրիպումներին (սխալներին) հարկ կա դարձնելու ավելի լայն ուշադրություն, որովհետև նման շեղումները և ոչ կանոնական գործածությունները գնալով ավելի նկատելի են դառնում հայերեն բանավոր խոսքում, եթե ոչ նաև գրավորում:

Հույս հայտնենք, որ հեղինակները ավելի մեծ ուշադրություն կդարձնեն նման գործնական բառարանի հետագա ստեղծման՝ թե՛ լեզվական նյութի ճշգրտության, թե՛ ծավալի առումով:

Վ. Գ. Հ.